


ՏԵՐԵՆ-ԽՍԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քրտիւն
պէտք է ուղղել առ

ԽՍԲԱԳԻՐԻ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Quai de l'Égypte, 42

Direction du journal PAROS
Bazar Mouros, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՍԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տրեկին. ողջ դ. 80
» վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան Ժառնի-25
» վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԵՐԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԸ

Դիտած էք որ Եղիպտոսի մէջ մեր և
հայ-հռոմէականաց Առաջնորդարաններուն մի-
ջեւ յարաբերութիւնները շատ «պաշտօնական»
են, եթէ ոչ քիչ մը ցուրտ : Առաջնորդական
տեղապահ Հայրն ու Խաչիկներու կաթողիկո-
սը սիրալիր այցելութիւններ փոխանակելին,
բան մը որ դեռ տեղի չունեցաւ մեր կաթո-
լիկ եղբայրներու հոգեւոր պետին հետ : Ու-
րա՞նք էր առաջնութիւնը այս քաղաքավարա-
կան պարտականութիւնը կատարելու : Զենք
գիտեր, կատարելագոյնս պիտակ չըլլալով հո-
գեւորականութեան protocolet ձեւակերպու-
թիւններուն որոնք կը գործադրուին այստեղ,
բայց առ օտար է որ Տ. Աշոտ վարդապետ ու
Աղջիկներու Գերագոյն ժողովին առթիւ
չունեցան զիրար ուղիներ :

Այս պարագային յիշելով, մեր նպատակը
թերութիւն մը մատնանիշ ընել չէ, այլ փա-
փաղ յայտնել որ աւելի սերտ յարաբերու-
թիւններ մշակելու ջանք մը ըլլայ երկու կող-
մէն, օրինակ աւելելով նոյն իսկ կեդրոնէն ուր
Օրմանեան և Աղարեան Պատրիարքները մէկէ
աւելի անգամներ տեսակցեցան իրարու հետ
վերջին տարուան մէջ, և մինչև իսկ պապա-
կան նուիրակ մննչին տ. Պանթիլիոն եկաւ Աղգ-
Պատրիարքարան ու մեր Պատրիարքն ալ գնաց
նուիրակութեան պաշտօնատուն, ի Բանկալ-
թի : Զանազան առիթներով ալ իրարու վար-
դապետներ զրկեցին շնորհաւորութեան, ողջ-
երթի կամ բարի գալուստի :

Այս կէտը կը շեշտենք մանաւանդ անոր
համար որ, Եղիպտոսի գաղութներուն մէջ,
աշխարհականութիւնը՝ ուրիշ շատ մը տեղե-
րէ աւելի՝ կրօնային նկատմամբ անկախ,
համերաշխութեան ու եղբայրակցութեան ոգի
մը ունի : Խօսքերնիս հայ հռոմէականներուն
և մեր ազգայիններուն վրայ է, ինչպէս կը
տեսնուի : Պետական պաշտօնատար, վաճա-
ռական, գործարանատէր, արհեստաւոր, խա-
նութեան, հայու և կաթողիկէ խտրութիւն
չունին իրենց մէջ, ու այնպէս սիրով կը վար-
ուին ու կը տեսնուին իրարու հետ իւր թէ
մէկ Եկեղեցիի պատկանէին, ինչպէս կը պատ-
կանին մէկ Աղգի : Ժողովրդական խաւերուն
մէջ ալ նոյն բանն է :

Նագուշակ Արթին փաշան, օրինակի հա-
մար —կրթական նախարարութեան բաղմա-

հմուտ խորհրդականը — նոյնքան հաճոյակա-
տարութիւն ցոյց տուաւ ու կուտայ իրեն դի-
մաղ դաղթականները յանձնարարելու և գոր-
ծի մը տեղադրելու, ուրքան մեր երեւելիներ-
ը : Մատթէոսեան Նղբայրները՝ իրենց գոր-
ծարանին ու վաճառատան մէջ թերեւս շատ
աւելի դիւրութեամբ ու բազմաթիւ պաշտօն-
եաներ ու գործաւորներ ընդունեցին, անխտ-
րաբար ու մարդասիրաբար, ուրքան չըրաւ Ե-
ղիպտոսի ո՛րեւէ ծխախոտի գործարան կամ
արհեստական մեծ հաստատութիւն :

Օրինակներ կրնայինք շարունակել, եթէ
երկարել ուզէինք : Բայց ի՞նչ հարկ : Այս եր-
կու անուններն ալ յիշեցինք, առթիւ յար-
մար սեպելով հրապարակային երախտագի-
տութեան հարկ մը մատուցանելու համար ա-
նոնց, այն դաղթական ու չքաւոր երիտա-
ւարդներուն կողմէ որոնք անձամբ խմբագրա-
տուն գալով կը պատմեն իրենց գործած պաշտ-
պանութիւնը :

Աշխարհականներուն ընծայած այս քա-
ջարկական երեւոյթին բաղդատմամբ՝ հոգե-
ւորականութեան ձեռնպահութիւնը կամ կըղ-
զիացումը յաւ կը պատճառէ մեզի և ամեն
անոնց որոնք լուսաւորչականի, հռոմէականի ու
բողոքականի խտրութեան դարը անցած կը
նկատեն այլեւս ու ազգութիւնը կը սիրեն ու
կը պաշտպանեն իր ամբողջութեանը մէջ :

ՇԱՐԱԹ ՊԱՐԱԼՈՆԷ

ՀԱՅԵՐԸ ՈՒ ՔԱԿԱՆՆԵՐԸ

ՊԱՐԱԼՈՆ, 27 հոկտեմբեր

Անցեալ գիշեր գտնուեցայ նուազահասակ մը
որուն մատնաւոր հանգամանքները այնքան խոր աղ-
գեցին վրաս որ բաժին մը կուգեմ հոնէ զգոյցով
ներքէ տղապիտան, երբեքնի ընթերցողներէս ուսնայ,
այսօր մզուած ո՛ր արդեօք, ո՛վ գիտէ . . .

Բայց պէտք է քիչ մը առաջին առնել խնդիրը :
Բան մը յատկապէս նշանակելի է այս գաղա-
կան գաւառի մասին, այն է խել մը կէտերու մէջ
աներեւակայելի նմանութիւն մը տեղւոյ պարագա-
ներուն, մարդկանց բարոյական պայմաններուն ու
այն վիճակին միջեւ զոր ունեցանք մենք հայերս,
ափսոս, և Պարսի մէջ իսկ, երբ տակաւին չկային
կառավարական արդի խտրութիւնները :

Ահա՛ գաւառ մը ընդարձակ՝ իր առանձին լիզ-
ուովը, զոր օտարք կը շփոթեն երբեքնի սպանեօղե-
րէնին հետ, օժտուած ձոխ զրակոնութեամբ մը,
թէեւ խորթ ու կոշտ իսկ գրեթէ, իր յատուկ
կարեւոր մասովը, գաղափարական ընկերութիւն
ներովը, երաժշտական ակումբներովը, վերջապէս

ամրացած այն հաղար պայմաններով որոնց վրայ նախ
կը պարտաւորի յենու ազգ մը եթէ փախազող է
ապրիլ իր յատուկ ուժերովը :

Ու այս ամեն մարմինները, առանց բացառու-
թեան, տոգորուած են ազգային խիստ եռանդով
մը որ կը միտի ամեն եղանակով մտցնել ամեն խա-
ւերու մէջ, արդէն խորագէտ արմատացած, գա-
ղաւնութեան ոգին, ուրոյն աղբուրիւն մը կազ-
մելու անզուսպ փափագը, ու նպատակին հասնելու
համար ամեն կարգի զոհողութեանց պատրաստակա-
նութեան պէտքը :

Որովհետեւ պէտք է ըսել թէ գաղաւնը ինք-
զինքը սպանիացի չնկատուր քիտ, գաղաւն է այն.
տխուր հարկեր ենթարկած են յիշեր օտարի լուծին
որմէ պէտք է պրծի օր մը :

Յետոյ՝ այն թոյլ, մեղկ ու ազգաստ ժողովրդին
մէջ գաղաւնը իր անհերքելի խորամտութիւննե-
րովը զաւաճելութիւններովը դուրս կը ցայտէ ա-
ռաջին քննութեամբ մը :

Գաղաւնը աշխատաւոր է ամեն բանէ տակի.
Եթէ իր ուշիմութիւնը չունի արտապարգ փայլ մը,
գնանք վրայ իր անխոնջ ու անվատ տոկոսնութեամբ
յապիկել անվերջ դժուարութեանց, յարատեւելով
միշտ ու միշտ :

Գաղաւնը կը խորտոմնայ իր-ուստի իր Բախ-
մովը, Պարսիկովը, իր մայրաքաղաքովը (Պարսքըն),
իր ճշմարիտ հարստութեամբը, գործարաններովը,
ու կը ցուի ունայն սպանեօղներուն վրայ որոյ խնդ
ու խելաս արարքները կը մզեն, արդէն երկու երեք
գարէ ի վեր, ամբողջ երկիրը աղբատուրեան ու սը-
նանկութեան մէջ, տեղի տալով մինչև իսկ հեա-
ւոր գաղթականութեանց մէջ անզուսպ ահագին
բողոքներու զոր կը տուծէ օտարաբնակ գաղաւնին
ալ իր դրամովը ու արիւնովը :

Եւ ահա այս պայմանները աչքի առնելու ունե-
նալով էր որ, առաջնորդուեցայ բարեկամ մը աղ-
բատ փողոցի մը անկիւն, տան մը երրորդ յարկը ու
հոն տեսայ երաժշտապետին չորս զին շարուած, ու-
շաղիր, կանտաւոր ու լուրջ, բանուոր, գործաւոր,
զարդապան 40—50 տարեց, երիտասարդ ու տղայ,
որոնք կուսանէին երգել. Ի՞նչ, — Գաղաւնեայի հին
երգերը :

Այդ երգերը չունէին թերեւս ինքնին արտա-
սովոր գեղեցկութիւն մը ոչ իր բանաստեղծութիւն
և ոչ իր երաժշտութիւն. բայց ազոնք իրենց մէջ
կը պաշէին, ծածկուած իրենց գողտր ու պարզ հա-
ւաքներուն մէջ, անբացատրելի բան մը, այն է գա-
ղաւնական ոգին, որ ինքն իրմէ կը թափանցէ
ունկնդրին սիրտը, կարծես թէ դուստով անոր գէմբին.
«Մենք հոս գաղաւն ենք ամենքս» :

Ահա՛ որ մեր ներկայութիւնը նշմարուած էր
հոն, ու վերջին երգը մեզի ի պատիւ եղաւ : Զիս
գաղղիացի կը կարծէին ընկերովս պէս ու ամբողջ
խումբը սկսաւ Մարտի 25-ի հրաշալի երգը որոյ
խորտաւ ու վսեմ շեշտերը կը մագնիսէին ամբողջ
հանդիսականները, գրգռելով անոնց մէջ էն խա-
րունկը գնահատող թեւերը :

Բայց ես կը տենայի միշտ այն հին ժողովուր-
դական խեղճ նուագներուն, մեղմ ու անզոյն, նուա-
ն փառաւոր փունջի մը թաւալած տխուր ծաղիկնե-
րուն որոնք անցեալին բուրումները կը յիշեցնէին
ինծի, շարժելով սիրտս ամբողջ ու առաջնորդելով
միտքս ու երեւակայութիւնս դէպ ի անդառնալի
ժամանակները վաղեմի վիտքի մը որ չուզէր ան-
հետանալ

ՄԵՆԻԿ

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Օրոշան դեպք, եզրափակում համար, Սի-
ամի քաղաքում աշխարհում է, որ աղքատ
իսկ Աղեխանդիս հասած է այն վայրկե-
սին ուր կը գրեմիս այս տղեր :

Եթե աշխարհագրական բաժին մը ու-
նենայինք Փարոսի մէջ, պիտի սկսեինք ըսե-
լով թէ հարաւային Ասիոյ այդ ընդարձակ
երկիրը, Հնդկաստանի մէջ, որուն վրայ միա-
հեծան կը տնտէսական հարաւային
կողմը՝ Սիամի ծոցը, Զինու ծովն ու Մա-
լաքան, եւ արեւմտեան կողմը՝ Պենակաւան
ծոցն ու անգլիական Հնդկաստանը, թէ կի-
ման տակ է ու վաւարող, թէ մայրաքաղաք
է Պակիսթան՝ Մեհմադ գետին երկու եզերքնե-
րուն վրայ կառուցուած, թէ բնակչութեան
թիւը 6,000,000ը կանցնի չինացիներով
խառն որովհետեւ հարաւային հնդկական
քաղաքացիական պատերազմէն ետք զաւ-
րած հասարակութեան, թէ . . . եւ այլն :

Սիամի ժողովուրդը պոստալայապէս է
եւ քաղաքացիական պատերազմէն ետք
մարմնաւորուած է Պոստալային, կեանքա-
նաւորուած մը : Թիպաքիս, փոքրահասակ ու
խելոք երեւոյթով մարդիկներ են Սիամցիները,
բայց ուժեղ, խելացի ու խորամանկ :

Եթե ժողովուրդին թիւը ինչ է երկրին
ընդարձակութեան քաղաքացիական, պատե-
րանային է որ յայտնաբերուած է շատ մը
հարկա-
տու գեղերով որովհետեւ իսկ Սիամցիներուն
հետ չեն հաշուիր :

Իր անագին անհատներուն ու յայնա-
ծաւայ դաշտերուն մէջ՝ փիղերը, ռնգեղջիւ-
րները, վագրերը ու կապիկները կը վիս-
նան : Հարստութեան մեծագոյն աղբիւրներէն
մէկն է փղոսկրի վաճառականութիւնը :

Նմանութիւնը զոր կրնանք գտնել Սիամի
ու Եգիպտոսի միջեւ, բրիտանիա ու շախ-
մալայի մշակութիւնն է որով կը գրաւի երկրագործ
ժողովուրդն ընդհանրապէս : Բանական մի-
այն կը պակսի :

1851էն ի վեր, անգլիացիները առեւ-
տական դաշնագրերով կապուած են Սի-
ամի հետ, որուն բնակչաց քաղաքակրթ-
ութեան ընդունելութեան մէջ՝ առաջնութիւն
կոտային պնդելով :

Բուրձնակերպ, ինքն ալ քաղաքացի-
ական է, եւ իր երկու գաւառներ Լոնտոնի մէջ
կը դաստիարակուին :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Նիւ-Եորքի Հայ Կոմիտէի ղեկավար
188 թիւին մէջ հետեւեալը կը հրատարակէ :

Եւրոպայէն ազգային մը կը հարցնէ մեզի. — «Ա-
մերիկայի Հայոց անունը շատ աւելած է կըսեն.
ճշմարիտ է, և եթէ իրօք անոնք է, չի՞ կրնար
զարման ըլլալ : »

Իմաստը ինչպէս երկու ազգիւր ունի տեղեկու-
թեան, որոց վրայ կրնայ հիմնել կարծիքը այդ մա-
սին. մէկը Հայ թղթակիցներու նամակներն, երկ-
րորդ՝ Ամերիկայի ծանօթներու կողմէ բանիւ բերա-
նոյ իրեն եղած գիտողութիւնները :

Եւ այդ կերպով կազմուած մեր կարծիքը ա-
ւարկի. —

Հայոց վրայ նպատակաւ համարուած ունեցող

ամերիկացիներ շատ են : Անցեալներ ամերիկացի
երէց մը ինծի պատմեց հետեւեալը. «Հանրապե-
տի առաջնորդ մը ուղարկուած զբոսեց իւր քա-
ղաքակրթի կերպերովը. և ինծի տակ՝ սոսմարդը
Հայոց քաղաքակրթութիւնն ունի. և իրեն հարցնելով՝
հաւատեցի թուիս, իրօք մարդը Հայ էր : »

Աւելցնենք սոսմարդուն թէ յիշեալ երէցը
բանի մը Հայ միայն ճանաչէր է : Ընդհանրապէս
սակաւաթիւ Հայերու հետ ծանօթացած ամերիկա-
ցիք լաւ, մինչեւ իսկ շատ բարձր համարուած ունին
անոնց վրայ :

Ահա ամերիկացի անհատներու գիտողու-
թիւնները մերայնոց մասին :

1. Բաւական մարդը չեն :
2. Առեւտուրի մէջ չանհաւանար են և շատ
ժամանակ կ'առնեն ու քիչ շահ կ'առնեն :
3. Իրարու դէմ չ'ուսումը զատ կը բռնան՝ կ'աւ-
րատարան մը :

Այս թերութիւնները յայտնաբերուած արեւելեան
ժողովրդոց հասարակ եղող թերութիւններ են :

Զենք կարծէր թէ Ամերիկայի Հայոց անունը
ընդհանրապէս անյայտիւ կամ տրամադրուած կը նկատու-
ուի մեզ գող հանելու չափ. բայց Հայերը ամերի-
կացոց, Փրանսուցոց, գերմանացոց, ռուսաց
չափ քաղաքակրթութեան չեն նկատուիր, անոնց չափ
չեն յարգուիր. և այս անշուշտ արդար է : Մենք
անոնց հաւատարմութեան համար պարտինք քիչ մը աւելի
մարտնչել, տոկոս և վեհանք լինիլ :

Արդեօք Հայի ընթերցողներուն մէջ ալ
գտնուեցա՞ն «գիւրգիւղեանք» որոնք կրակ
ու բոց կարին այս տողերը կարդալով, ու իրենց
արժանապատուութիւնը պահելու միջոց նկա-
տեն . . . թերթերը ետ խրկել ու պղտիկ pro-
pagande մը կազմակերպել՝ այդ գիտողու-
թիւններուն արձագանգ տուող թերթին դէմ :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Նախորդ թիւով Աթէնքէ հեռագիր մը
հրատարակեցինք որ կը ծանուցանէր թէ թու-
րքի լիւրերու գործին քննութիւնը բուն վեճերու
առիթ կ'ուսուց թէ՛ քննիչ մարմինն և թէ՛ մա-
մուլին մէջ : Համառօտիւ ըսենք թէ ի՞նչ է
խնդիրը :

Վերջին ժամանակներս ստուգուել է որ
պատերազմի ատեն հեղինական թուրքի-
ւանաւորուն ունեցած բոլոր թուրքիները զուրկ
էին իրենց սովորական խանձէն որ պայթուցիկ
անդիկէ պէտք է բաղկանայ : Հետեւաբար, եթէ
այդ մարտանաւեր թշնամի նաւատորմի մը դէմ
գնելու հարկին մէջ գտնուէին, արձակուած
թուրքիները ուժ չի պիտի ունենային բնաւ :

Այս յայտնութեան վրայ՝ հանրային կար-
ծիքը գայթակղեցաւ և իսկոյն քննիչ յանձ-
նաժողով մը կազմեցին որուն առջեւ կը դառ-
ուին երկու նաւային սպաներ՝ Ռաֆթօրուլօ
և Անասթասիօր որոնք յանցաւոր կը նկատուին
այս անբացատրելի անփութութեան պատ-
ճառաւ :

Երկրիս իշխանը հեղինական նաւատորմին ընդ-
հանուր հրամանատարն ըլլալով, արքայական
գերդաստանին հակառակորդ թերթերն ա-
ռիթը չի փախուցին ուղղակի կամ անուղղա-
կի՝ բայց շատ կ'ծու ընդունով հարուածելու
համար երիտասարդ իշխանը որ կըսուի թէ
շատ զգածուած է այս ցաւալի յայտնութենէն :
Յունական մամուլը միահամուռ կը պահանջէ
որ նաւատորմիդ վերանորոգուի ու վերա-
կազմուի :

— Կ. Պոլսէն կը հաղորդեն թէ Սամուի
նախկին իշխան Փօթիաթէս պէ՛յ որ Պէրօլի
փաշային Կրէտէ փախչելէն ետք՝ այդ կղզիին

կառավարիչ անուանուեցաւ և որ Բրիտանիոյ
քաղաքացիական կապէր, մեռեր է :

— Հայտնութեան պայմանագրին վրայ բա-
նակցող պատուիրակները յանձնաժողով մը
կազմել են՝ երեք օսմանցի և երկու յոյն ան-
դամէ, որ պաշտօն ունի որոշել պատերազմի
ատեն անհատներու կրած նիւթական փառ-
ները :

— Թայմզին տեղեկութեանց նայելով,
Անգլիոյ ու Գերմանիոյ զինագործարանները
միջման մէջ են թուրքիոյ նաւատորմին նորոգ-
ման ու վերակազմութեան գործն ստանձնելու
համար : Արմիթօնի գործարանին կողմէ Սըր
Անտրէու և Բրուքի գործարանին կողմէ Պ. Մէնս-
հաուզէն Կ. Պոլիս գացեր են, իւրաքանչիւրն
իր առաջարկութիւնները ներկայացնելու : Մին-
չեւ իսկ կըսուի թէ, կը յարէ Թայմզ, Վիլ-
հելմ կայսրը ուղղակի Սուլթանին կոչում ը-
րեր է ի նպատակ Բրուքի :

— Թուրքիոյ և Պուլկարիոյ յարաբերու-
թիւններն հետզհետէ բարեկամական կը դառ-
նան : Կ. Պոլսէն կը հաղորդեն եւրոպական
թերթերուն թէ նախորդ շաբթուան երեք ի-
րաւունք եւրէր են. առաջինը կը վերաբերի
Բէօսթէնէի պուլկար երկաթուղին միացման
Մէլանիկ-Սկիւպի գծին հետ, Բոսնիոյ ճամ-
բով. երկրորդը կարածն է Պուլկարիան տա-
նութ առեւտրական գործակալներ կարգել
Մակեդոնիոյ զանազան գաւառներուն և է-
տիրէի նահանգին մէջ. երրորդը ներում կը
չնորհէ տաանըջորս Պուլկարներու որոնք քա-
ղաքական յանցանքի համար դատաւարտուած
ու բանտարկուած են ի Թուրքիա :

Սուլթանը միանգամայն խոստացեր է ի
մօտոյ կարգադրութիւն մը ընել պուլկար ե-
պիսկոպոսներու պէրաթի ծանօթ խնդրին առ-
թիւ :

— Սերպիոյ ներքին կացութիւնը, որուն
նուրբեր էինք մեր վերջին Այթմէնթիւնը,
տաքնապալի երեւոյթ մը կ'առնէ : Պէրկարտի
մէջ տարօրինակ զրոյցներ կը շրջին Աղեքսանդր
թագաւորին և հօրը նկատմամբ :

Վերապահութեամբ լուր մը կը յիշուի
թէ Սերպիոյ երիտասարդ վեհապետը մոռա-
գիր է մեկնել իր մայրաքաղաքէն, անձնական
առողջութեան պատճառով երկարատեւ ճամ-
բորդութիւն մը կատարելու համար օտար եր-
կիրներ, և խնամակալութիւնը յանձնել Մի-
լան թագաւորին : Այս վերջինին համար ալ
կըսուի թէ կը պատրաստուի երկրորդ անգամ
ըլլալով բաժնուի իր կնոջմէն՝ Նաթալի թա-
գուհիէն : Առաջին ամուսնալուծման վճիռը
տրուած էր 1888 հոկտ. 23ին և ջնջուած
1893 մարտ 7ին :

— Ռուսական Նովոյե Վրէմիա լրագրի
մէկ յօդուածը, որ հաւանական կը նկատէ
Երկրիս իշխանին Կրէտէի կառավարիչ ընտ-
րուիլը, մեծ յուզում առաջ բերեր է Աթէն-
քի մէջ :

— Այս երեքշաբթի օր երկրաշարժի ցրն-
ցումներ զգացուել են ի Բաթրաս, Զանթա,
Ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ մէջ ուր քանի մը տու-
ներ ճեղքուող են :

— Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ միջազգա-
յին յանձնաժողովը որոշեր է որ Նէճէրօն Թուր-
քիոյ մնայ՝ հակառակ Յունաստանի բողոք-
ներուն :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Մ. վարդապետ Աշոտ հիւանդ. ըլլալով, փոխա- նորդարար Տ. Մամբրէ և Տ. Եղնիկ քահանա- ները ներկայ գտնուեցան այս առաւօտ Ապ- տինի պալատը կատարուած պաշտօնական ըն- դունելութեան և բարի գալուստ մաղթեցին Բարձր. Խորհրդին որ սիրալիր կերպով ընդունեց Հայոց Առաջնորդարանի ներկայացուցիչները

Կ. Պոլսէն կը հեռագրեն անդլիական Տէյլի Մէյլ լրագրին .

«Հայոց Պատրիարքարանի Ժողովը կաշ- խատի մերձեցում մը առաջ բերել Սուլթանին հետ :

«Վերջապէս ճանչցան որ Եւրոպայի մի- ջամտութեան կողմէն ընեւն անօգուտ բան է :

«Փոքր-Ասիոյ հայերը ծայրայեղ կերպով խղճալի կացութեան մէջ կը գտնուին . վայր- կեանք վայրկեան կոտորածներ կրնան տեղի ունենալ :

«Զրոյց կայ թէ քիւրտերը աւարառու- թիւններ ու խռովութիւններ գործեր են Սասունի և Մշոյ մէջ . բայց այս լուրերը հաս- տատուած չեն տակաւին :

Բաւական չեղա՞ւ

Կիւմանք թէ Քաղաքական Ժողովին իր երէկի նիստին մէջ նկատողութեան առնելով գաղթականներուն վիճակը, որոշեց որ օրա- կան պարէնի նպաստը շարունակուի՝ անկա- լող և անոք գաղթականներուն, ցնոր տնօրի- նութիւն :

Աւստրալիոյ մէջ 1755 զրշ.ի գումար մը հանգանակուելով Եգիպտոսի հայ գաղթա- կաններուն ի նպաստ, զրկուած է Տիկին Թա- դուհի Յ. Յակոբեանի որուն նախաձեռնու- թեամբ կատարուած էր արդէն այս մարդա- սիրական գործ, յիշեալ Տիկինը Աւստրալիա- ընակ իր ծանօթ ընտանիքներուն կաշում ը- րած ըլլալով նամակաւ :

Վատի-Հալֆայի մէջ ալ, հայ հումէական ժամագործ Պ. Բէդրիի նախաձեռնութեամբ 1560 զրշ. հանգանակուած է նոյն նպատա- կով : Նուիրատուները հայեր և օտարազգիներ են միանգամայն :

Այս կրկին գումարներ շարժուա սկիզբը Առաջնորդարան յանձնուեցան :

Ամերիկայի Ուատը քաղաքին մէջ Եփրատ անուն հայերէն թերթի մը հրատարակու- թեան պիտի սկսուի մօտերս :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խորհրդը չորեքշաբթի իրիկուն Գա- հրէ հասաւ և հանդիսաւոր կերպով ընդուն- ուեցաւ քաղաքային ու զինուորական իշխա- նութիւններուն կողմէ : Կայարանէն Ապտինի պալատը տանող պողոտային երկու կողմը լեց- ուած էին ժողովրդեան բազմութեամբ և բազ- մաթիւ վաճառատուներ, օթէլներ, սրճա- րաններ ու տուներ զարդարուած էին դրօշ- ներով : Կայարանին մէջ, ուր մեծամեծ պատ- րաստութիւններ տեսնուած էին, կը սպասէին պաշտօնական անձնակազմութիւնը, բնիկ ու եւ-

րոպացի, ինչպէս նաեւ զանազան ազգաց հո- գեւոր պետերը, ամենքն ալ յատուկ հրա-ւ էրով :

Ժամ 4.45ին խափական կառավարման կայարան հասնելով՝ ողջունուեցաւ 21 թնդա- նօթներու արձակմամբ : Խորհրդը կեցած էր իր վազօն-սալօնի աստիճանին վրայ, քովն ունե- նալով նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշան : Ն. Բարձրութիւն չընկալուեցաւ բռնաներուն, Գահիրէի կառավարչին ու գեր- կառավարչին, եգիպտական ու անգլիական բանակներու սպաներուն և հրաւիրեալներուն կողմէ : Բռնաներուն ձեռքը սեղմելէ և ալ ու ձախ բարեւելէ ետք, կառք նստաւ նա- խարարապետին հետ : Կայարանին առջեւ, Հայկանտրոյ սկոլտական դունդը զինուորա- կան պատիւներ ընծայեց :

Նախարարները և Սըր Էլփին Բալմըր ո- ռոնք Շիպն.էլ-Քոմ ընդառաջ երթալով, խը- տիվական կառավարման վերադարձած էին Գահիրէ, պալատական կառքերով հետեւե- ցան Խորհրդին մինչեւ Ապտին. յետոյ կուգային խափական տան պաշտօնատարներն ու սպա- ները : Սկոլտական զօրագունքը կայարանէն մինչեւ Ապտին հետեւեցաւ խափական թա- փօրին, նուագածութեամբ :

Ժամ 6ին, Ն. Բարձրութիւն Ապտինի պալատէն Գուպէ գնաց ուր անցուց գիշերն :

Այս առաւօտ պաշտօնական ընդունելու- թիւն կատարուեցաւ Ապտինի պալատը :

—Բրէնս Մուհամմէտ Ալի և արտաքին գործոց նախարար Պուլթոս փաշա երէկ Ա- ղեքսանդրիա ուղեւորեցան, քաղաքին կառա- վարչին և ուրիշ բարձրաստիճան պաշտօնա- տարներու հետ ընդունելու համար Սիամի թագաւորը որ այս առաւօտ կը հասնի իր զօ- սանաւով :

Գուլաթիկհօրն քանի մը ժամ Բաս-էլ-Թի- նի պալատին մէջ հանգստանալէ ու քաղաքին մէջ պտոյտ մը կատարելէ ետք, այս իրիկուն իսկ Գահիրէ պիտի առաջնորդուի յատուկ կառավարման Բարձր. Խորհրդի ու նախարար- ները կայարանէն պիտի ընդունին Ն. Սիամա- կան Վեհափառութիւնը :

Տակաւին չի ծանուցուեցաւ պտոյտներու, հացկերոյթի և ընդունելութեան պաշտօնա- կան կարգացուցակը, բայց հաւանաբար Վեհ. հիւրը երկուշաբթի առաւօտ Բուրգերն այցե- լէ ու հոն նախաճաշէ . երկուշաբթի կամ ե- րեքշաբթի գիշեր Ապտինի պալատին մէջ պի- տի տրուի պաշտօնական սեղանը որուն համար 62 հրաւիրագրեր ուղղուած են :

Գուլաթիկհօրն ուղեւորութիւն մը պիտի կատարէ դէպի Վերին Եգիպտոս :

—Հելլենական ընդհ. հիւպատոս Պ. Կրի- բարիսի նախաձեռնութեամբ Աղեքսանդրիոյ մէջ յանձնաժողով մը կազմուել է օգնելու համար Եգիպտոսէն պատերազմի գացող յոյն կամաւորներուն որոնք վերադարձած են ու անգործ կը մնան, առանց ապրուստի միջոց ունենալու : Յանձնաժողովն իր մէջ 100 ոսկիի առաջին նպաստ մը հանգանակել է իսկոյն :

—Լինքընշայր Բէճիմէնդ զօրագունքէն զինուոր մը իր ընկերներէն մէկը սպաննած ըլլալով, մահուան դատապարտուած էր : Գա- հիրէի անգլիական գաղթականութիւնը իմա-

նալով որ մահու պատիժը պիտի գործադրուէր երէկ, քանի մը հարիւր ստորագրութեամբ հանրագիր մը ներկայացուց Լօրտ Քրօմըրի, խնդրելով որ անգլիացի զինուորին կեանքը չնորհուի :

Բրիտանական ներկայացուցիչն հեռագ- րով Լոնտոն հաղորդեց հանրագրին պարունա- կութիւնը և պատասխան ստացաւ թէ թա- գուհոյն կառավարութիւնը հարկ չի տեսներ զինուորական ատենին կողմէ տրուած մահու վճիռը բեկանելու :

Հետեւաբար, երէկ առաւօտ Սիթատէլին մէջ գործադրուեցաւ մահու պատիժը՝ դա- տապարտուած զինուորը հրացանի բռնուելով : Մահը վայրկեանական եղաւ :

—Ասիոյ թի պատժական դատարանը 13 տարուան շղթայակալ աշխատութեան դա- տապարտեց տեղացի մը որ Եունէս Պէհիթ անուն մարդ մը սպաննած էր :

—Սպարապետ Քիչնէր փաշա յառաջիկայ շաբթու Պէրպէրէն Գահիրէ կը դառնայ, Գա- սալան եգիպտական կառավարութեան յանձ- նուելու խնդրին կարգադրութեան համար :

—Ռուսական Քօսթրօմա փոխադրանաւը որ Կարմիր ծովու մէջ խրած էր, ազատուել է :

—Խորհրդի շոգենաւներն այսուհետեւ չորեքշաբթի իրիկունները պիտի մեկնին Կ. Պոլսէն և կիրակի առաւօտ Աղեքսանդրիա հասնին փոխանակ շաբաթի :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԱՆՆԱ, 5 նոյեմբեր. — Կրէտական ժողովին պատուիրակները Աթթինի գաղին ծովակալներուն ներկայացունելու համար իրենց առաջարկները որով Կղզիին համար ինքնօրինութիւն կը խնդրեն և թուրք զօրքերուն հեռացումը կը պահանջեն :

ԼՈՆՏՈՆ, 5 նոյեմբեր. — Փայլակ, կիւսացոյ թէ Անգլիոյ, Ֆրանսա և Ռուսիա տրամադրի են երաշ- խադրելու յունական փոխառութիւնը (որ պիտի յատկացուի պատերազմական տուգանքին վճարման) :

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Ձմեռնամուտը՝ բնականաբար համար :
—Գործերն ի՞նչպէս են տեսնուի, սիրելի առ- ուեսակիցս : Հիւանդներդ սկսա՞ն վերադառնալ :
—Այո՛. դժբաղդաբար տեսեր բժշկուած են ի- րենց օղակոխութենէն :


ՀՕԼՏԸՆԻ ՓԱՆԹՕՆԵՐԸ

Հօլլանդի Ֆանթօններուն ներկայացումները, Սթրիքս Քլըպի մէջ, հետզհետէ ընդամուր հետա- բրբրութիւն կը շարժեն իրենց զբոսալի խաղերով, ճարտար մեքենականութեամբ ու գեղեցիկ նուագա- ծովութեամբ :

Այս գիշեր շահեկան ներկայացում՝ նոր յայ- տագրով, և վաղը Մարիսէ :

Ո՞Վ ԿԸ ՓՈՓՈՔԻ

Միմալայն 120 դրուէ վճարելով գնել, ոսկի կո- թէն լարող, խիստ սիրուն և ընտիր ժամացոյց մը թէ՛ կնոջ և թէ՛ արանց համար, թող դիմէ :



Խան Խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւակերպութե- րեալի մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիքէլ ժամացոյցներ պատի և քօստլի բազմազան բանաւորներ, ինչպէս նաեւ գոհարեղէնք : 1—12

Ա Ձ Դ

Օր. Էթէնի Գալաթիան օր Պոլսոյ կարեւոր թաղերու ազգային վարժարաններու մէջ ձեռագիրութեան դասեր աւանդած և քննադատուած է իր բնական և կարող ձեռագիրութիւնը, տարիք մը հետեւեցիպէս հաստատուած է, ձեռագիրութեան դասեր կ'աւանդէ թէ՛ ժամանորայն տուններ և թէ՛ վարժարաններու մէջ: Դիմողքս կը ստանձնէ կանացի հաշուաւորներու պատրաստութիւն՝ շատ ճաշակատար կերպով և զիրարմատչելի պայմաններով: Դիմել Փարոսի խորագրատուներ:

4-16

ՏԻՐԱՆ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Դերմակ

ՇԱՐԻԱ ՄԱՌԱՍՄԷՏ ԱԼԻ, ՄԱՆԱՍՐԱ ՓՈՂՈՑԻ ԴԷՄ

Կը խօսանայ իրեն դիմող լսնախորհրդներ գոհացնել քէ ձեռի կատարելութեամբ և քէ զնոց չափաւորութեամբ:

1-2

ՅԱԿՈՒ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Տիար Յ. Ասատուրեան, որ վերջերս արտօնուեցաւ փաստաբանի աստիճան և խառն դասարաններու առջեւ, իր գրասենեակը հաստատուած է ի Գալաթիայի խաղաղութիւն քաղին մէջ, Մազլում փառայի ապարանքին դիմաց, Անգ-ձօրն պատի վրայ:

Բաց ի դասական գործերէն, յիշեալ գրասենեակին մէջ քննարկեմ, անգլիերէն, արաբերէն, հայերէն և բուրբերէն լեզուներով օրինական և ամեն տեսակ գրութիւններ կը բարգմանուին:

Յանախորհրդներ գոհ պիտի մնան աշխատութեան եղանակէն և գիներու չափաւորութեան:

Զրի խորհրդածութիւն՝ վկայեալ աղբասներուն համար:

5-10

Հ Ա Մ Մ Ա Մ

ԵՐԻՐԱՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՆԻՔ

ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՍԷԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՆԻՔ, ԶՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՆԻՔԸ ԲԱՅ Է

Էրիկ մարդոց համար տոտուտեան ժամը 7էն 10 և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:

Կանանց համար տոտուտեան ժամը 10էն մինչեւ կէս օր:

Ջրար և կիրակի օրերը միմիայն էրիկ մարդոց համար:

Կիրակի և տօն օրերը Համամար: Կէս օրէն վերջ գոց է:

Տ Պ Ա Ր Ա Ն

"ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր ՈՒ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱԶԱԶԻ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱԲԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒՆՅՈՒՅԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրագրողի օր և է քաղաքէ կամ դիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԱԿԵԼԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձերու և տնտեսուի

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերէն, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի



ՅԵՐԱՅԱԿԵԼԵՆ ԵՒԱՅԵՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ
Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Ց Է Ք

ԿԱՐԵՒՐ ԵՒ ԺԵՆԵՐ

Կարեւոր և յաճախ խնայողութիւն. — Մաքրութեան կատարելագործութիւն. — Արագութիւն և դիւրութիւն. — ձեռագիրութիւն և այլոց հսկանքներ:

ԿԱՐԵՒՐ. ԼԵԱԿԱՅԻՆ ԶԻ ՄԱՇԵՆԵՐ


Եւրոպայի և Ամերիկայի մէջ 100,000,000 փութ ստեղծուած ապառու. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ցերեկայացուցիչ յեղափոխ

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱՅԱՐ ՄՈՒՐՈՒՐ 9-24

ԺԱՄԱՅՈՅՑԻ ՊԵՏԻՔ ՈՒՆԻՔ



Դիմողք ՍԷԼԱՆՏԻՏ և Նորաշատտ միջերանցի ի խան խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեռագիր վեճակի մէջ: Սեղանեան փառաւորներն օր Պոլսոյ հրապարակի վրայ մեծ համբաւ մը կը վայելէր արդէն, իւր ապրանքային ընտրութեամբը և զընդամենը իր անուշադրութեամբը, վերջերս բոլորովին հոս փոխադրուած ըլլալով Եզրագրողի հասարակութիւն և պիտի կրնայ մեծապէս օգտուի այս առիթէն:

Աւելորդ չենք համարիր փարբիկ դաշտիւր մը առաջ մի բանի տեսակ ժամացոյցներու զնոց վրայ:

Նիկի, մեկ կողմն ապակի, կորէն լաւուղ 22 դե.ողջ

» » » » » » ուրիշ մեկ

Նիկի, մեկ կողմն ապակի, կորէն լաւուղ սկեկ

» » » » » » պատ 50 դե.ողջ

Նիկի, երկու կողմն ապակի, կորէն լաւուղ 40 » »

» » » » » » ոսկեպատ

Արծաթ » » » » » » 50 դե.ողջ

» » » » » » ոսկեպատ

» մեկ » » » » » » 80 դե.ողջ

» » » » » » ոսկեպատ

Ոսկի, երկու կողմն » » » » » » 85 դե.ողջ

» » » » » » 120 » »

» » » » » » սարքեր մեկ

» » » » » » տեսակ 150 դե.ողջ

Հոս հաւաքածոյ ամեն տեսակ ոսկի ժամացոյցներու թէ կնոջ և թէ արտոյ համար անմարդիկ զներով: Ամենայն դատ կը գտնուի նաեւ ամեն ճաշակի և ամեն քաղի յարմար արծաթ և նիկի ժամացոյցք, շրջապէս և գոհարեղէնք. ինչպէս նաեւ պատի և քննարկի բազմազան քանութիւններ:

Ամերիկեան ժամացոյցք նիկի քօնաղի և զրա. սեղանի յարմար:

Միմիայն 10 դուրուս ողջ

որուն կանոնաւոր բանիւն երաշխաւորեալ է:

Ուրեմն դիմողք ուղղակի Սեղանեան միջերանցի ի խան խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեռագիր վեճակի մէջ:

Եզրագրողի ամեն կողմէ եղած յանձնարարութիւնը փութով կը կատարուի:

5-12

ԵՐԻՐԱՊԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԵՆ ԵԶԵՐԱԿՐԻՐՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4	Ստու. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Ստու. 1,2,3,4	Էրթրէս 1, 2, 4	Ստու. 1,2,3,4	Էրթրէս 1, 2, 4	Ստու. 1 2 3 կարգ	Էրթրէս կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնզա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առու.
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	12 35
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 44
Տամանզուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Սալեք քանդակ	» 6 25	9 15	10 45	2 30	էրթրէս 1 —	9 40	8 7	—	5 50

ԵԶԵՐԱԿՐԻՐՈՅ ԳԱՀԻՐԵՆ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Ստու. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Ստու. 1,2,3,4	Էրթրէս 1 2 4	Խառն 1,2,3,4	Ստու. 1,2,3,4	Էրթրէս 1 2 4	Ստու. 1 2 3 կարգ	Էրթրէս կարգ
Սալեք քանդակ	մեկ. —	7 30	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	էրթրէս 11 —
Տամանզուր	» —	8 6	8 58	10 2	էրթրէս 12 14	4 13	5 15	8 6	առու. 1 9
Թանթա	» 6 15	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. —	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնզա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	—
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	4 25
»	մեկ. —	—	—	—	—	—	—	—	5 50

ԳԱՀԻՐԵ-ՍԻԷԶ

ՊԵՆԶԱՅԻ ՀԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻՐԵ

ԿԱՅԱՐԱՆԵՐ	Ա.Պ.Ս.Տ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆԵՐ	Ա.Պ.Ս.Տ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւլզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնզա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»	մեկ. 12 33	7 53	Խաւարիկ	» էրթրէս 1 20	7 5
Ջակադիկ	» 1 34	8 54	»	» —	—
»	մեկ. 1 44	9 4	Ջակադիկ	» 3 7	8 53
Խաւարիկ	» 3 40	1 —	»	մեկ. 3 17	9 3
Սիւլզ կայարան	» —	5 —	Պէնզա	» 4 13	9 47
Տօք (բարափ)	» 6 55	—	»	մեկ. 4 17	9 4
»	» —	—	Գահիրէ	» 5 5	10 35